

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 35/8

ք.Երևան

18 օգոստոսի 2022թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ալեքսանդր Կուստովի (ՀՎՀՀ՝ 40082314) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Ալեքսանդր Կուստովը (այսուհետ նաև՝ բողոքաբեր) հայտնում է, որ ՌԴ քաղաքացի է, 2022թ. մարտի 11-ին ՀՀ ԱՆ ԻԱ Պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր: Չծավալելով որևէ տեսակի գործունեություն՝ մի քանի օր անց, մինչև գրանցման 20-րդ օրը լրանալը, ներկայացել է միևնույն վայր և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից դուրս է եկել: Չունենալով հաշվապահ և չտիրապետելով ՀՀ օրենսդրությանը՝ չի ներկայացրել որևէ հարկային հայտարարություն և հաշվարկ, այդ թվում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նպատակ ունենալով ծավալել ձեռնարկատիրական գործունեություն սույն թվականի հուլիսի 21-ին՝ կրկին վերագրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, բայց այս պահին այլևս 2022թ. հարկային տարվա համար չի կարող ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն Ձև 201, քանի որ գրանցումից հետո 20-օրյա ժամկետում այն չի ներկայացվել:

Հաշվի առնելով, որ բողոքաբերը չի տիրապետել ՀՀ օրենսդրությանը և մինչ այս պահը իր կողմից դեռևս չի իրականացվել որևէ տեսակի ձեռնարկատիրական գործունեություն՝ խնդրում է թույլատրել որպեսզի 2022թ. համար ներկայացնի շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Ալեքսանդր Կուստովը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է 11.03.2022թ.-ին (հաշվառման համար՝ 286.1222948:

Ա/Ձ Ալեքսանդր Կուստովը սահմանված ժամկետում չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով ավտոմատ կերպով համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող:

Համաձայն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 05.08.2022թ. թիվ /25.6/34470-2022 գրության՝ 11.03.2022թ.-ին քաղաքացի Ալեքսանդր Կուստովը գործակալությունում հաշվառվելիս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված և հարկային մարմնի կողմից հաստատված ձևով հայտարարություն՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու, շրջանառության հարկ վճարող, ինչպես նաև միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություններ չի ներկայացրել, իսկ հաշվառման դիմումի մեջ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ նշում է կատարել «ոչ» դաշտում:

3. Բողոքարկման առարկային վերաբերվող իրավական կարգավորումներ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխան՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հետևյալ դեպքերում և ժամկետներում, մասնավորապես՝ հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ որպես անհատ

ձեռնարկատեր (սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ կրկին որպես անհատ ձեռնարկատեր) հաշվառված անձին գործակալությունը տրամադրում է (այդ թվում՝ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով) նաև հարկային մարմնի սահմանած ձևով ծանուցում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային համակարգերի ու դրանց ընտրության նպատակով հայտարարություններ ներկայացնելու ժամկետների վերաբերյալ: Անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու, շրջանառության հարկ վճարող, ինչպես նաև ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունները կարող են ներկայացնել գործակալության միջոցով:

Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից, ուսումնասիրելով սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը և հաշվի առնելով ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 05.08.2022թ. թիվ /25.6/34470-2022 գրությունը՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Ալեքսանդր Կուստովին ներկայացնելու հայտարարություն՝ 2022թ.-ի ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ալեքսանդր Կուստովի դիմում-բողոքը բավարարել:

2. Ա/Ձ Ալեքսանդր Կուստովի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2022թ.-ին համարել շրջանառության հարկ վճարող:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

 Recoverable Signature

X 

Signed by: TAMAZYAN KAREN 2612840184

